ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՎԵՐԻՆ ԵՎ ՍՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐԻ ՊՐՈԹԵԶԱՎՈՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/40-Ի*

ք. Երևան

«30» հուլիսի 2018 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ինտերօրթո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պրոթեզաօրթոպեդիկ ծառայություններ մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __5__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 104861000 (մեկ հարյուր չորս միլիոն ութ հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __19__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Ինտերօրթո» ՍՊԸ
ք. Երևան Կառավարական տուն 3	ք. Երևան Սեպուհի 7
ՀՎՀՀ՝ 01506515	ՀՎՀՀ՝ 00074171
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011016723	Հ/Հ 1510031253420100
Աշխատակազմի ղեկավար ---------- Ա. Գրիգորյան	Տնօրեն ---------- Լ. Պետրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 1
« 30 » հուլիսի 2018 թ. կնքված
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/40-Ի ծածկագրով *պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	Միավորի գին	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	51411130	Նախաբազկի միոպրոթեզ	Նաերկայացվում է ստորև	հատ	5925000	1975000	3	ք. Երևան	Ըստ շահառուների դիմելիության՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 15.10.2018թ.
2	51411130	Սրունքի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ	Նաերկայացվում է ստորև	հատ	24552000	558000	44	ք. Երևան	
3	51411130	Սրունքի էկզոսկելիտարոչ մոդուլյար պրոթեզ	Նաերկայացվում է ստորև	հատ	16170000	385000	42	ք. Երևան	
4	51411130	Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ	Նաերկայացվում է ստորև	հատ	38380000	1010000	38	ք. Երևան	
5	51411130	Ազդրի բուժամարզական պրոթեզ լամինացիայով	Նաերկայացվում է ստորև	հատ	10224000	639000	16	ք. Երևան	
6	51411130	Սրունքի բուժամարզական պրոթեզ լամինացիայով	Նաերկայացվում է ստորև	հատ	9610000	310000	31	ք. Երևան	
Ընդամենը					104861000				

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և տրամադրման ծառայությունների շրջանակներում վերին և ստորին վերջույթների պրոթեզների պատրաստման և տրամադրման ծառայությունների

Ստորև բերված տեխնիկական բնութագրերը կիրառվում են ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին՝ վերին և ստորին վերջույթների պրոթեզների պատրաստման և տրամադրման ծառայությունների 1-6-րդ չափաբաժինների նկատմամբ:

Վերին և ստորին վերջույթների պրոթեզների պատրաստման և տրամադրման ծառայություններին առնչվող հարաբերությունները կարագավորվում են ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամաններով:

Ստորև նշված չափաբաժինների պատրաստման հիմնական մասերը և դետալները (ոտնաթաթ, մոդուլյար դետալներ, ծունկ, դետալներն իրար միացնելու ընթացքում օգտագործվող մեխանիզմներ, նյութեր՝ այդ թվում սիլիկոնից պատրաստված և արտաքին տեսքի համար օգտագործվող կոսմետիկ նյութերը) պետք է համապատասխանեն միջազգային ISO ստանդարտներին և ունենան այդ ստանդարտների համապատասխանության հավաստագիր կամ հայտարարագիր:

Սույն տեխնիկական բնութագրի իմաստով տեխնիկական ընթացիկ սպասարկում է համարվում պրոթեզի ֆունկցիոնալ թերությունների վերացումը, որը չի ենթադրում հիմնական դետալների և նյութերի փոխարինում:

Որոշմամբ սահմանված կարգով և դեպքերում վերին և ստորին վերջույթի պրոթեզ ստանալու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ Շահառու) ծառայություն մատուցող կազմակերպության(ների) կողմից տրամադրվում է՝

1. ՎԵՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹԻ ՊՐՈԹԵԶՆԵՐ	
1) Ստորև ներկայացված չափաբաժիններին վերաբերող ընդհանուր պահանջներ, առանձնահատկություններ և այլ պայմաններ	
Չափաբաժինների պատրաստման և/կամ տրամադրման պայմանները	1. Պատրաստման և տրամադրման ժամկետը մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝ մինչ պրոթեզի վերջնական հարմարեցումը Շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է երկարաձգվել այն դեպքում, եթե Շահառուն սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման: 2. Դիմելու օր փաստվում է շահառուի գրավոր դիմումով, որի օրինակելի ձևը հաստատվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով: 3. Յուրաքանչյուր Շահառուի համար պատրաստվում է անհատական մոտեցմամբ, ***չի օգտագործվում նախկինում տրամադրված պրոթեզի որևէ դետալ, մաս կամ որևէ նյութ:*** 4. Սույն տեխնիկական բնութագրերում ներառված վերին վերջույթի պրոթեզները տրամադրելելիս՝ նույն օրը, յուրաքանչյուր ծայրատի համար տրամադրվում է՝ 1) 3 բրդյա-բամբակյա վերին վերջույթի գուլպա կամ, 2) 2 բրդյա-բամբակյա վերին վերջույթի գուլպա և 1 կաշվից ձեռնոց: **Նշում՝** տրամադրվող գուլպա-ձեռնոցի տեսականին և համապատասխան քանակները տրամադրվում են շահառուի գրավոր ցանկությամբ՝ այդ մասին նշում կատարելով Շահառուի անձնական քարտում: 5. Շահառուին սովորեցվում է պրոթեզից օգտվելու ձևը: Ձգողական պրոթեզների դեպքում Շահառուն փաստում է պրոթեզը կրելու՝ այսինքն պրոթեզով որևէ առարկա բռնելու առնվազն 3 հաջողված փորձի մասին, որը հավաստվում է Շահառուի կողմից անձնական քարտում ստորագրելիս: 6. Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա գրավոր համաձայնությունից հետո: **Նշում 1՝** եթե Շահառուն չի տալիս իր համաձայնությունը պրոթեզը ստանալու վերաբերյալ, ապա նրա դիմումի հիման վրա, վիճահարույց հարցը քննարկվում է Բուժատեխնիկական հանձնաժողովում, որի որոշումը իրավապարտադիր Կազմակերպության համար: Բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա կազմակերպությունը վերացնում է պրոթեզի թերությունը իր միջոցների հաշվին՝ ա) եթե պրոթեզի կրումը հնարավոր չէ ոչ պատշաճ որակի կամ սխալ պատրաստման հետևանքով, բ) եթե պրոթեզի պատրաստման ընթացքում հաշվի չի առնվել անձի առողջական խնդիրները: **Նշում 2՝** Միոպրոթեզների ոչ պակաս քան 30 տոկոսը տրամադրվում է միայն զինվորական ծառայության ժամանակ վիրավորում ստացած

	Շահառուներին: Միոպրոթեզների համար դիմած, սակայն զինվորական ծառայության ժամանակ վիրավորում չստացած անձնաց, միոպրոթեզ է տրամադրվում միայն Բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա:
Չափաբաժիններին ներկայացվող պահանջները	Պետք է բավարարի շահառուի պահանջներին՝ ➢ անթրոպոմետրիկ տվյալներով ➢ բժշկական ցուցումով ➢ տարիքային առանձնահատկություններով ➢ դիմացկունությամբ և ամրությամբ ➢ ֆունկցիոնալությամբ ➢ հարմարությամբ ➢ թեթևությամբ ➢ էսթետիկ տվյալներով
Վիճակը	**1.** Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից և դետալներից պատրաստված **2.** Տրամադրվում է նաև անվտանգ տեղափոխման համար անհրաժեշտ փաթեթավորման նյութեր
Երաշխիքային ժամկետ	Մեծահասակներին 4 տարի, երեխաներին 2 տարի, որի ընթացքում որակի հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին: ***Կազմակերպության կողմից երաշխիքային սպասարկում կարող է չիրականացվել, եթե՝*** 1. խախտվել են պրոթեզի պահպանման ու օգտագործման կանոնները, 2. թերությունն առաջացել է բնականոն մաշվածության հետևանքով: Ընդ որում, բնականոն մաշվածություն համարվում են պրոթեզի օգտագործման հետևանքները, որոնք երաշխիքային ժամկետում առաջացրել են տեխնիկական վիճակի և արտաքին տեսքի վատթարացում, 3. պրոթեզը օգտագործվել է ոչ անմիջական նշանակությամբ, 4. պրոթեզի վրա առկա են չլիազորված անձանց կողմից կատարված վերանորոգման հետքեր, 5. թերությունն առաջացել է պրոթեզի կառուցվածքը կամ սխեման փոխելու հետևանքով, 6. թերությունն առաջացել դժբախտ պատահարների, միտումնավոր կամ անզգույշ կատարած քայլերի կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով, 7. պրոթեզը սպառողին հանձնելուց հետո նրա վրա հայտնաբերվել են մեխանիկական վնասվածքներ՝ խոնավության, բարձր կամ ցածր ջերմաստիճանի, ժանգոտման, թթվային միջավայրի ազդեցության տակ առաջացած վնասվածքներ: Վերը նշված 1-7 դեպքերի համար անձը իր միջոցների հաշվին է իրականացնում վերանորոգումը: **Նշում՝** երաշխիքային ժամկետում վերանորոգման հետ կապված վիճահարույց դեպքերի վերաբերյալ, քաղաքացու դիմումի հիման վրա, եզրակացություն է ներկայացնում Բուժատեխնիկական հանձնաժողովը, որը իրավապարտադիր է Կազմակերպության համար: 1) Բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա կազմակերպությունը իր միջոցների հաշվին իրականացնում է սպասարկումը (վերանորոգում, դետալների

	փոխարինում), եթե սպասարկման կամ վերանորոգման անհրաժեշտություն է առաջացել տրամադրված պրոթեզի դետալների, նյութերի որակյալ չլինելու պատճառով: 2) Բուժատեխնիկական հանձնաժողովը եզրակացություն է տալիս նաև վերը նշված 1-7 դեպքերի վերաբերյալ:
Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար օգտագործվող նյութերը պետք է լինեն անվտանգ, բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը: Եթե Շահառուն ունի որևէ առողջական խնդիր կապված անդամահատված ծայրատի հետ, կազմակերպության մասնագետները նրան հայտնում են պրոթեզը չպատրաստելու նպատակահարմարության մասին՝ այդ մասին նշում կատարում Շահառուի քարտում և խորհուրդ տալիս դիմել բժշկական հաստատություն կամ Բուժատեխնիկական հանձնաժողովին: Շահառուն ստորագրում է, որ տեղեկացված է պրոթեզը կրելու ոչ նպատակահարմար լինելու վերաբերյալ:
2) Տեխնիկական նկարագրություն	
Նախաբազկի միոպրոթեզ Չափաբաժին 1	Նախատեսված է նախաբազկի ծայրատի պրոթեզավորման համար: Պատրաստվում է կիսաֆաբրիկատներից՝ պլաստիկից, սենսորային տվիչներից, մարտկոցից: Տրամադրվում է նաև լիցքավորման սարք: Պրոթեզն ապահովում է մատների շարժում՝ մկանների կծկման հետևանքով ազդակը արհեստական մատներին փոխանցելու միջոցով: Դաստակի շրջանում առկա է ՊՎԽ ծածկույթ՝ առավելագույնս նմանեցրած անատոմիական տեսքին և մաշկի գույնին: Ծայրատի ընդունիչը պատրաստվում է պլաստիկ և ակրիլային նյութերով: Ներառում է նաև չափաբաժնով նախատեսված տեսակի՝ նախորդ տարիներին հատկացված պրոթեզների տեխնիկական ընթացիկ սպասարկումը: **Նշում 1՝** սույն չափաբաժնով նախատեսված միոպրոթեզը տրամադրվում է միայն զինվորական ծառայության ժամանակ վիրավորում ստացած Շահառուներին: **Նշում 2՝** վերը նշված Շահառուներին սույն միոպրոթեզի փոխարեն կարող է տրամադրվել նախաբազկի ձգողական պրոթեզ՝ իրենց գրավոր համաձայնությամբ, որը կցվում է Շահառուի անձնական քարտին և պահվում Շահառուի անձնական գործերի մեջ:

2. ՍՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹԻ ՊՐՈԹԵԶՆԵՐ	
1) Ստորև ներկայացված չափաբաժիններին վերաբերող ընդհանուր պահանջներ, առանձնահատկություններ և այլ պայմաններ	
Չափաբաժինների պատրաստման և/կամ տրամադրման պայմանները	1. Պատրաստման և տրամադրման ժամկետը մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝ մինչ պրոթեզի վերջնական հարմարեցումը շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է երկարաձգվել այն դեպքում, եթե շահառուն սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման: 2. Դիմելու օր փաստվում է շահառուի գրավոր դիմումով, որի օրինակելի ձևը հաստատվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

	նախարարի հրամանով: 3. Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական մոտեցմամբ, ***չի օգտագործվում նախորդ ստացած պրոթեզի, այդ թվում բուժամարզական պրոթեզի որևէ դետալ, մաս կամ որևէ նյութ:*** 4. Շահառուին սովորեցվում է պրոթեզից օգտվելու ձևը: Շահառուն փաստում է պրոթեզով քայլելու (ձեռնափայտով կամ հենակներով կամ հատուկ պրոթեզով քայլել սովորելու համար հարմարանքով՝ հենուղիով, կամ առանց դրանց) հաջողված փորձի մասին, որը հավաստվում է Շահառուի կողմից անձնական քարտում ստորագրելիս: **Նշում՝** եթե Շահառուն չի տալիս իր համաձայնությունը պրոթեզը ստանալու վերաբերյալ, ապա նրա դիմումի հիման վրա, վիճահարույց հարցը քննարկվում է Բուժատեխնիկական հանձնաժողովում, որի որոշումը իրավապարտադիր է Կազմակերպության համար: Բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա կազմակերպությունը վերացնում է պրոթեզի թերությունը իր միջոցներով՝ 1) եթե պրոթեզի կրումը հնարավոր չէ ոչ պատշաճ որակի կամ սխալ պատրաստման հետևանքով, 2) եթե պրոթեզի պատրաստման ընթացքում հաշվի չի առնվել անձի առողջական խնդիրները: 5. Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա գրավոր համաձայնությունից հետո:
Չափաբաժիններին ներկայացվող պահանջները	Պետք է բավարարի Շահառուի պահանջներին՝ ➢ անթրոպոմետրիկ տվյալներով ➢ բժշկական ցուցումով ➢ տարիքային առանձնահատկություններով ➢ դիմացկունությամբ և ամրությամբ ➢ ֆունկցիոնալությամբ ➢ հարմարությամբ ➢ թեթևությամբ ➢ էսթետիկ տվյալներով
Վիճակը	**1.** Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից և դետալներից պատրաստված **2.** Տրամադրվում է նաև անվտանգ տեղափոխման համար անհրաժեշտ փաթեթավորման նյութեր
Երաշխիքային ժամկետ	Մեծահասակներին 3 տարի, երեխաներին 1 տարի, որի ընթացքում որակի հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին: ***Կազմակերպության կողմից երաշխիքային սպասարկում կարող է չիրականացվել, եթե՝*** 1. խախտվել են պրոթեզի պահպանման ու օգտագործման կանոնները, 2. թերությունն առաջացել է բնականոն մաշվածության հետևանքով: Ընդ որում, բնականոն մաշվածություն համարվում են պրոթեզի օգտագործման հետևանքները, որոնք երաշխիքային ժամկետում առաջացրել են տեխնիկական վիճակի և արտաքին տեսքի վատթարացում, 3. պրոթեզը օգտագործվել է ոչ անմիջական նշանակությամբ, 4. պրոթեզի վրա առկա են չլիազորված անձանց կողմից կատարված վերանորոգման հետքեր, 5. թերությունն առաջացել է պրոթեզի կառուցվածքը կամ սխեման փոխելու հետևանքով, 6. թերությունն առաջացել դժբախտ պատահարների, միտումնավոր

	կամ անզգույշ կատարած քայլերի կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով, 7. պրոթեզը սպառողին հանձնելուց հետո նրա վրա հայտնաբերվել են մեխանիկական վնասվածքներ՝ խոնավության, բարձր կամ ցածր ջերմաստիճանի, ժանգոտման, թթվային միջավայրի ազդեցության տակ առաջացած վնասվածքներ: **Վերը նշված 1-7 դեպքերի համար անձը իր միջոցների հաշվին է իրականացնում վերանորոգումը:** **Նշում՝** երաշխիքային ժամկետում վերանորոգման հետ կապված վիճահարույց դեպքերի վերաբերյալ, քաղաքացու դիմումի հիման վրա, եզրակացություն է ներկայացնում Բուժատեխնիկական հանձնաժողովը, որը իրավապարտադիր է Կազմակերպության համար: 1) Բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա կազմակերպությունը իր միջոցներովի հաշվին է իրականացնում սպասարկումը (վերանորոգում, դետալների փոխարինում) եթե սպասարկման կամ վերանորոգման անհրաժեշտություն է առաջացել տրամադրված պրոթեզի դետալների, նյութերի որակյալ չլինելու պատճառով: 2) Բուժատեխնիկական հանձնաժողովը եզրակացություն է տալիս նաև վերը նշված 1-7 դեպքերի վերաբերյալ:
Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար օգտագործվող նյութերը պետք է լինեն անվտանգ, պետք է բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը: Եթե Շահառուն ունի որևէ առողջական խնդիր կապված անդամահատված ծայրատի հետ, կազմակերպության մասնագետները նրան հայտնում են պրոթեզը չպատրաստելու նպատակահարմարության մասին՝ այդ մասին նշում կատարում Շահառուի քարտում և խորհուրդ տալիս դիմել բժշկական հաստատություն կամ Բուժատեխնիկական հանձնաժողովին: Շահառուն ստորագրում է, որ տեղեկացված է պրոթեզը կրելու ոչ նպատակահարմար լինելու վերաբերյալ:
2) Տեխնիկական նկարագրություն	
Սրունքի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ Չափաբաժին 2	Նախատեսված է սրունքի ծայրատի պրոթեզավորման համար: Մարմնի կշիռը կրում է պրոթեզի ներքին մետաղյա ձողը, որը երեսպատվում է սպունգով և կոսմետիկ գուլպայով: Օգտագործվում են մոդուլյար դետալներ: Ծայրատի ընդունիչի արտաքին պատը պատրաստվում է լամինացիայով, ներսից տեղադրվում է փափուկ պոլիմերային նյութերից պատրաստված ընդունիչ: Ելնելով անձի ֆիզիոլոգիական վիճակից և ցանկությունից կարող է տեղադրվել անշարժ կամ շարժական ոտնաթաթ: Անշարժ ոտնաթաթ տեղադրելու մասին ցանկությունը Շահառուն փաստում է անձնական քարտում ստորագրելով: Սույն չափաբաժնում ներառված պրոթեզները տրամադրելիս՝ նույն օրը, յուրաքանչյուր ծայրատի համար Շահառուին տրամադրվում է՝ 1) 3 բրդյա-բամբակյա գուլպա կամ, 2) 2 բրդյա–բամբակյա գուլպա և 1 սիլիկոնե գուլպա կամ, 3) 1 բրդյա–բամբակյա գուլպա և 2 սիլիկոնե գուլպա Ներառում է նաև չափաբաժնով նախատեսված տեսակի՝ նախորդ տարիներին հատկացված պրոթեզների տեխնիկական ընթացիկ սպասարկումը: **Սույն պրոթեզը տրամադրվում է միայն՝** 1. Առաջին անգամ պրոթեզավորվողներին՝ միայն

	Բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա 2. Մինչև 30 տարեկան բոլոր անձանց՝ անկախ նախկինում ստացած լինելու կամ առաջնակի դիմելու հանգամանքից, քաղաքացու համաձայնությամբ 3. 30-ից բարձր կանանց՝ անկախ նախկինում ստացած լինելու կամ առաջնակի դիմելու հանգամանքից: 4. 30 տարեկանից բարձր նախկինում սույն պրոթեզի տեսակը ստացած Շահառուներին 5. 30 տարեկանից բարձր նախկինում սրունքի այլ տեսակի պրոթեզ ստացած տղամարդկանց՝ միայն Բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա **Նշում՝** տրամադրվող գուլպաների տեսականին և համապատասխան քանակները տրամադրվում են Շահառուի գրավոր ցանկությամբ՝ այդ մասին նշում կատարելով Շահառուի անձնական քարտում:
Սրունքի էկզոսկելիտար ոչ մոդուլյար պրոթեզ Չափաբաժին 3	Նախատեսված է սրունքի ծայրատի պրոթեզավորման համար: Մարմնի կշիռը կրում է պրոթեզի արտաքին պատը: Պատրաստվում է լամինացիայով, կարբոնով, փայտյա դետալներով, ամրացնող փրփրանյութով (պեդիլեն) ծայրատի ընդունիչի մասում օգտագործվում են պոլիմերային նյութեր: Ելնելով անձի ֆիզիոլոգիական վիճակից և ցանկությունից կարող է տեղադրվել անշարժ կամ շարժական ոտնաթաթ: Սույն պրոթեզը տրամադրելիս՝ նույն օրը, յուրաքանչյուր ծայրատի համար տրամադրվում է՝ 1) 3 բրդյա-բամբակյա գուլպա կամ, 2) 2 բրդյա–բամբակյա գուլպա և 1 սիլիկոնե գուլպա կամ, 3) 1 բրդյա–բամբակյա գուլպա և 2 սիլիկոնե գուլպա Ներառում է նաև չափաբաժնով նախատեսված տեսակի՝ նախորդ տարիներին հատկացված պրոթեզների տեխնիկական ընթացիկ սպասարկումը: **Սույն պրոթեզը տրամադրվում է միայն՝** 1. Առաջին անգամ պրոթեզավորվողներին՝ միայն Բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա 2. Նախկինում սույն պրոթեզի տեսակը ստացողներին, 3. Նախկինում սրունքի այլ տեսակի պրոթեզ ստացողներին **Նշում՝** տրամադրվող գուլպաների կամ ձեռնոցի տեսականին և համապատասխան քանակները տրամադրվում են շահառուի գրավոր ցանկությամբ:
Ազդրի էնդոսկելիտար մոդուլյար պրոթեզ Չափաբաժին 4	Նախատեսված է ազդրի ծայրատի պրոթեզավորման համար: Մարմնի կշիռը կրում է պրոթեզի ներքին մետաղյա ձողը, որը երեսպատվում է սպունգով և կոսմետիկ գուլպայով: Ծայրատի ընդունիչի արտաքին պատը պատրաստվում է լամինացիայից, ֆիքսվում է մարմնին վակուումային համակարգով: Ելնելով ֆիզիոլոգիական առանձնահատկություններից կարող է ծայրատի ընդունիչի մեջ տեղադրվել փափուկ պոլիմերային նյութերից պատրաստված լրացուցիչ ընդունիչ (տեպեֆորմ), իսկ պրոթեզը մարմնին ֆիքսվել պատրաստի մոդելային էլաստիկ գոտկա-ազդրային աղեկապով: Օգտագործվում են մոդուլյար ծնկան հոդ և դետալներ: Հաշվի առնելով անձի ֆիզիոլոգիական վիճակը և ցանկությունը՝ կարող է տեղադրվել անշարժ կամ շարժական ոտնաթաթ: Անշարժ ոտնաթաթ տեղադրելու մասին ցանկությունը Շահառուն փաստում է անձնական քարտում ստորագրելով: Ներառում է նաև չափաբաժնով նախատեսված տեսակի՝ նախորդ տարիներին հատկացված պրոթեզների տեխնիկական ընթացիկ սպասարկումը:

4. ՍՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹԻ ԲՈՒԺԱՄԱՐՁԱԿԱՆ ՊՐՈԹԵԶՆԵՐ	
1) չափաբաժիններին վերաբերող ընդհանուր պահանջներ, առանձնահատկություններ և այլ պայմաններ	
Չափաբաժինների պատրաստման և/կամ տրամադրման պայմանները	1. Պատրաստման և տրամադրման ժամկետը մինչև մեկ ամիս՝ կախված բարդության աստիճանից, որի ընթացքում կատարվում են անհրաժեշտ քանակի չափափորձարկումներ՝ մինչև պրոթեզի վերջնական հարմարեցումը շահառուին: Պատրաստման ժամկետը կարող է երկարաձգվել այն դեպքում, եթե շահառուն սահմանված ժամկետում չի ներկայանում չափափորձարկման: 2. Դիմելու օր փաստվում է շահառուի գրավոր դիմումով, որի օրինակելի ձևը հաստատվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով: 3. Յուրաքանչյուր շահառուի համար պատրաստվում է անհատական մոտեցմամբ, չի օգտագործվում այլ անձանց տրամադրված պրոթեզի, այդ թվում բուժամարզական պրոթեզի որևէ դետալ, մաս կամ որևէ նյութ: 4. Շահառուին սովորեցվում է պրոթեզից օգտվելու ձևը: Շահառուն փաստում է պրոթեզով քայլելու (ձեռնափայտով կամ հենակներով կամ հատուկ պրոթեզով քայլել սովորելու համար հարմարանքով՝ հենուղիով, կամ առանց դրանց) հաջողված փորձի մասին, որը հավաստվում է Շահառուի կողմից անձնական քարտում ստորագրելիս: **Նշում՝** եթե Շահառուն չի տալիս իր համաձայնությունը պրոթեզը ստանալու վերաբերյալ, ապա նրա դիմումի հիման վրա, վիճահարույց հարցը քննարկվում է Բուժատեխնիկական հանձնաժողովում, որի որոշումը իրավապարտադիր է Կազմակերպության համար: Բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա կազմակերպությունը վերացնում է պրոթեզի թերությունը իր միջոցներովի հաշվին 1) եթե պրոթեզի կրումը հնարավոր չէ ոչ պատշաճ որակի կամ սխալ պատրաստման հետևանքով, 2) եթե պրոթեզի պատրաստման ընթացքում հաշվի չի առնվել անձի առողջական խնդիրները: 5. Սույն չափաբաժնում ներառված պրոթեզները կրելու ամբողջ ժամանակահատվածում Շահառուին անհրաժեշտ սիլիկոնե և բրդյա-բամբակյա գուլպաները տրամադրվում են ծառայություն մատուցող կազմակերպության կողմից: 6. Շահառուին է հանձնվում վերջնական փորձարկումից և նրա գրավոր համաձայնությունից հետո: 7. Եթե ստորին վերջույթների տարբեր մակարդակներով անդամահատված Շահառուն չի ցանկանում ստանալ սույն տեխնիկական բնութագրով սահմանված զույգ ստորին վերջույթների տարբեր մակարդակների բուժամարզական պրոթեզները, ապա նա իրավունք ունի ստանալ իր կարիքին համապատասխան պրոթեզները նաև տարբեր 2 կազմակերպություններից: Եթե Շահառուն ցանկություն է հայտնում ստանալ պրոթեզներ տարբեր կազմակերպություններից, ապա Շահառուի դիմած՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը մյուս ծառայություն մատուցող կազմակերպության մասնագետին հնարավորություն է ընձեռնում իր մոտ կազմակերպել չափագրման, չափափորձարկման, տրամադրման և մյուս աշխատանքները, բացի պրոթեզի բուն պատրաստման գործընթացից: Սույն կարգավորումը գործում է նաև վերին վերջույթի տարբեր մակարդակներում պրոթեզների պատրաստման և տրամադրման ընթացքում:
Բուժամարզական պրոթեզներիի օգտագործման և հիմնական պրոթեզը տրամադրելու ժամկետը	**Բուժամարզական պրոթեզների օգտագործման ժամկետը մինչև մեկ տարի է:** Եթե Շահառուն ցանկանում է հիմնական պրոթեզը ստանալ սահմանված

	ժամկետից շուտ, ապա դիմում է Բուժատեխնիկական հանձնաժողովին, որը հաշվի առնելով Շահառուի ֆիզիոլոգիական առանձնահատկությունները եզրակացություն է տալիս ժամկետից շուտ հիմնական պրոթեզը ստանալու վերաբերյալ: Սահմանված ժամկետից շուտ հիմնական պրոթեզ ստանալու եզրակացություն կարող է տրամադրվել, եթե անձը նվազագույնը 6 ամիս օգտագործել է բուժամարզական պրոթեզը:
Չափաբաժիններին ներկայացվող պահանջները	Պետք է բավարարի շահառուի պահանջներին՝ ➢ անթրոպոմետրիկ տվյալներով ➢ բժշկական ցուցումով ➢ տարիքային առանձնահատկություններով ➢ դիմացկունությամբ և ամրությամբ ➢ ֆունկցիոնալությամբ ➢ հարմարությամբ ➢ թեթևությամբ ➢ էսթետիկ տվյալներով
Վիճակը	1. Չօգտագործված, ամբողջությամբ նոր նյութերից և դետալներից պատրաստված 2. Տրամադրվում է նաև անվտանգ տեղափոխման համար անհրաժեշտ փաթեթավորման նյութեր
Երաշխիքային ժամկետ	**Օգտագործման ողջ ժամանակահատվածի համար,** որի ընթացքում որակի հետ կապված խնդիրների վերացումը (ընդհուպ նորով փոխարինումը) իրականացվում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցների հաշվին: **Կազմակերպության կողմից երաշխիքային սպասարկում կարող է չիրականացվել, եթե՝** 1. խախտվել են պրոթեզի պահպանման ու օգտագործման կանոնները, 2. թերությունն առաջացել է բնականոն մաշվածության հետևանքով: Ընդ որում, բնականոն մաշվածություն համարվում են պրոթեզի օգտագործման հետևանքները, որոնք երաշխիքային ժամկետում առաջացրել են տեխնիկական վիճակի և արտաքին տեսքի վատթարացում, 3. պրոթեզը օգտագործվել է ոչ անմիջական նշանակությամբ, 4. պրոթեզի վրա առկա են չլիազորված անձանց կողմից կատարված վերանորոգման հետքեր, 5. թերությունն առաջացել է պրոթեզի կառուցվածքը կամ սխեման փոխելու հետևանքով, 6. թերությունն առաջացել դժբախտ պատահարների, միտումնավոր կամ անզգույշ կատարած քայլերի կամ անփույթ վերաբերմունքի հետևանքով, 7. պրոթեզը սպառողին հանձնելուց հետո նրա վրա հայտնաբերվել են մեխանիկական վնասվածքներ՝ խոնավության, բարձր կամ ցածր ջերմաստիճանի, ժանգոտման, թթվային միջավայրի ազդեցության տակ առաջացած վնասվածքներ: Վերը նշված 1-7 դեպքերի համար անձի իր միջոցների հաշվին է իրականացնում վերանորոգումը: **Նշում՝** երաշխիքային ժամկետում վերանորոգման հետ կապված վիճահարույց դեպքերի վերաբերյալ, քաղաքացու դիմումի հիման վրա, եզրակացություն է ներկայացնում Բուժատեխնիկական հանձնաժողովը, որը իրավապարտադիր է: 1) Բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հիման վրա կազմակերպությունը իր միջոցներովի հաշվին է իրականացնում սպասարկումը (վերանորոգում, դետալների փոխարինում) եթե սպասարկման կամ վերանորոգման անհրաժեշտություն է առաջացել տրամադրված պրոթեզի դետալների, նյութերի որակյալ չլինելու պատճառով: 2) Բուժատեխնիկական հանձնաժողովը եզրակացություն է տալիս նաև վերը նշված 1-7 դեպքերի վերաբերյալ:

Անվտանգությունը	Շահառուի օրգանիզմի համար անվտանգ, օգտագործվող նյութերը պետք է բավարարեն շահառուի հիգիենիկ և ֆիզիկական պահանջներին՝ հաշվի առնելով նրա հիմնական և ուղեկցող հիվանդությունների բնույթը: Եթե Շահառուն ունի որևէ առողջական խնդիր կապված անդամահատված ծայրատի հետ, կազմակերպության մասնագետները նրան հայտնում են պրոթեզը չպատրաստելու նպատակահարմարության մասին՝ այդ մասին նշում կատարում Շահառուի քարտում և խորհուրդ տալիս դիմել բժշկական հաստատություն կամ Բուժատեխնիկական հանձնաժողովին: Շահառուն ստորագրում է, որ տեղեկացված է պրոթեզը կրելու ոչ նպատակահարմար լինելու վերաբերյալ:
2) Տեխնիկական նկարագրություն	
Ազդրի բուժամարզական պրոթեզ լամինացիայով՝ Չափաբաժին 5	Նախատեսված է ազդրի ծայրատի առաջնակի պրոթեզավորման համար: Մարմնի կշիռը կրում է պրոթեզի ներքին մետաղյա ձողը: Ծայրատի ընդունիչի արտաքին պատը պատրաստվում է լամինացիայից, ֆիքսվում է մարմնին վակուումային համակարգով: Ելնելով ֆիզիոլոգիական առանձնահատկություններից կարող է ծայրատի ընդունիչի մեջ տեղադրվել փափուկ պոլիմերային նյութերից պատրաստված լրացուցիչ ընդունիչ, իսկ պրոթեզը մարմնին ֆիքսվել պատրաստի մոդելային էլաստիկ գոտկա-ազդրային աղեկապով: Օգտագործվում են մոդուլյար ծնկան հոդ և դետալներ: Հաշվի առնելով անձի ֆիզիոլոգիական վիճակը և ցանկությունը՝ կարող է տեղադրվել անշարժ կամ շարժական ոտնաթաթ: Անշարժ ոտնաթաթ տեղադրելու մասին ցանկությունը Շահառուն փաստում է անձնական քարտում ստորագրելով:
Սրունքի բուժամարզական պրոթեզ լամինացիայով՝ Չափաբաժին 6	Նախատեսված է սրունքի ծայրատի առաջնակի պրոթեզավորման համար: Մարմնի կշիռը կրում է պրոթեզի ներքին մետաղյա ձողը: Օգտագործվում են մոդուլյար դետալներ: Ծայրատի ընդունիչի արտաքին պատը պատրաստվում է լամինացիայով, ներսից տեղադրվում է փափուկ պոլիմերային նյութերից պատրաստված ընդունիչ: Ելնելով անձի ֆիզիոլոգիական վիճակից և ցանկությունից կարող է տեղադրվել անշարժ կամ շարժական ոտնաթաթ: Անշարժ ոտնաթաթ տեղադրելու մասին ցանկությունը Շահառուն փաստում է անձնական քարտում ստորագրելով:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է՝

1. Ծառայություն ստացած յուրաքանչյուր անձի համար լրացնել անձնական քարտ, որի ձև համաձայնեցվում է պատվիրատուի հետ (թղթային եղանակով):
2. Նախարարության պահանջի դեպքում տրամադրել ծառայություններ ստացած անձանց անձնական գործերը:
3. Մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար ծառայությունների մատուցումը, մասնավորապես, պրոթեզների պատրաստման համար չափագրումներն ու չափափորձարկումները կազմակերպել արտագնա այցելությունների միջոցով՝ սահմանամերձ մարզերում առնվազն 2 ամիսը մեկ անգամ, մյուս մարզերում՝ ըստ անհրաժեշտության: Սահմանամերձ մարզերում ծառայություն մատուցելու ժամկետների վերաբերյալ նախօրոք տեղեկացնել նաև պատվիրատուին:
4. Իրեն դիմած շահառուին տրամադրել պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված գրավոր տեղեկատվություն-հուշաթերթիկ մատուցված ծառայության, հիմնական տեխնիկական բնութագրերի, երաշխիքային սպասարկման, պահպանման ու օգտագործման կանոնների, հերթական տրամադրման ժամկետի վերաբերյալ: Շահառուն հուշաթերթիկն ստանալու փաստը հավաստիացնում է անձնական քարտում ստորագրելով:
5. Շահառուի ցանկությամբ ստացած պրոթեզի և դրա դետալների տեսակները, գույները և չափսը հավաստիացվում է շահառուի կողմից՝ այդ մասին անձնական քարտում ստորագրելով: Շահառուի ցանկությամբ չի կարող տրամադրվել այնպիսի ծառայություն կամ պարագա, որը չի համապատասխանում հաստատված տեխնիկական բնութագրերին:
6. Իրեն դիմած հաշմանդամություն կամ այլ սոցիալական կարգավիճակ ունեցող անձանց տրամադրել տեղեկատվություն << պետական բյուջեի միջոցներով պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների պատրաստման և տրամադրման ծառայությունների շրջանակներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պարագաների տրամադրման) վերաբերյալ՝ ***պատվիրատուից ստացած ձևաչափով***:

7. Ունենալ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝

1) Վերին և ստորին վերջույթի պրոթեզների պատրաստման առնվազն մեկ տարվա փորձառություն

2) տեխնիկական միջոցներ՝

ա. Անհրաժեշտ տեղեկատվությունը «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ» մուտքագրելու համար համակարգչային և կազմտեխնիկա կամ այլ սարքավորումներ.

բ. Պրոթեզների պատրաստման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, նյութեր սարքեր, սարքավորումներ, հաստոցներ, գործիքներ, համապատասխան կահավորված աշխատատեղեր (աշխատասեղան).

գ. Ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ այլ օժանդակ միջոցներ, այդ թվում.

- առնվազն մեկ զույգ բարձրությունը կարգավորվող արմնկային հենակներ
- առնվազն մեկ զույգ բարձրությունը կարգավորվող թևատակի հենակներ,
- առնվազն 1 հատ բարձրությունը կարգավորվող ձեռնափայտ,
- առնվազն 1 հատ բարձրությունը կարգավորվող քայլակ,

3) Համապատասխան շենքային պայմաններ՝ ծառայության մատուցման լիարժեք կազմակերպման համար, մասնավորապես՝

- Առանձնացված սպասասրահ՝ կահավորված աթոռներով կամ համապատասխան այլ կահույքով,
- Պրոթեզների պատրաստման համար չափագրման և չափափորձարկման առանձնացված սենյակ, իսկ ստորին վերջույթների պրոթեզների պատրաստման համար չափագրման և չափափորձարկման առանձնացված սենյակում, ի թիվս այլ անհրաժեշտ պարագաների պետք է առնվազն կահավորված լինի հատուկ քայլուղիով (брусья) և քայլելու մարզասարքով (тредбан):
- Մետաղամշակման աշխատանքներ, լամինացիայի հետ կապված աշխատանքներ և գիպսի հետ կապված աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ և առողջության համար աշխատանքի անվտանգ և անվնաս պայմաններ, այդ թվում համապատասխան կահավորմամբ շենքային պայմաններ (արհեստանոց),

4) ֆինանսական միջոցներ՝ առանց կանխավճար ծառայություն մատուցելու համար:

5) աշխատանքային ռեսուրսներ՝ վերին և ստորին վերջույթների պրոթեզներ պատրաստելու և տրամադրելու համար համապատասխան աշխատակիցներ, այդ թվում.

ա. առնվազն վերջին 3 տարվա ընթացքում աշխատանքային պայմանագրի հիման վրա վերին և ստորին վերջույթի պրոթեզներ պատրաստած աշխատակիցներ ***կամ*** հետևյալ որակավորում ունեցող աշխատակից(ներ), անկախ աշխատելու ժամկետից՝

- Օրթոպեդ-ինժեներ(ներ),
- Օրթոպեդ-տեխնիկ(ներ),
- Օրթոպեդ-մեխանիկ(ներ),
- Պրոթեզիստ(ներ)

Ընդ որում, 225 և ավել պրոթեզի պատրաստման մրցույթում հաղթած կազմակերպությունը պետք է ծառայություններ մատուցելիս ունենա նվազագույնը 3 աշխատակից:

բ. շահառուների փաստաթղթերի ընդունման, ձևակերպման, անձնական քարտի լրացման և դրանց պահպանման համար, «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ»-ում մուտքագրումներ կատարող և ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ այլ աշխատակիցներ:

6) Տեղաշարժվելու դժվարություն ունեցող անձանց համար մատչելի շենքային պայմաններ տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց սպասարկումն իրականացնելու համար (համաձայն << քաղաքաշինական նորմերին), ներառյալ անարգել մուտք կազմակերպության շենք և սպասարկման սրահ՝ մուտքի զրոյական մակարդակ կամ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինական նորմերի համապատասխան կառուցված թեքահարթակ, իսկ դրանց անհնարինության դեպքում համապատասխան անվտանգ տեխնիկական սարքավորումներ՝

վերելակ, բարձրացնող մեխանիզմներ և սպասարկման սրահում ու չափափորձարկման սենյակում տեղաշարժվելու համար խոչընդոտների բացակայություն.

8. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի պահանջների համաձայն «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ» մուտքագրել.

1) ծառայություն ստանալու համար շահառուի կողմից դիմելու օրը՝ շահառուի տվյալները (**ներառյալ հեռախոսահամարը**) և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթերը (**այդ թվում գրավոր դիմումը՝** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատված օրինակելի ձևին համապատասխան),

2) ծառայությունը փաստացի մատուցելու օրը՝ պրոթեզի տրամադրման վերաբերյալ տեղեկատվությունը (**այդ թվում՝ տրամադրման օրը, ամիսը, տարին**) և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով հաստատված անձնական քարտի այն էջի ամբողջական լուսապատճենը, որտեղ երևում է շահառուի ստորագրությամբ հաստատված հավաստումը՝ պրոթեզը ստանալու (պրոթեզավորվելու):

3) մինչև «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ»-ում 8-րդ կետի 1 ենթակետի իրականացումն ապահովող փոփոխությունների կատարումը ծառայություն ստանալու համար դիմումը և ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ սահմանված փաստաթղթերը «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ» են մուտքագրվում ծառայությունը փաստացի մատուցելու օրը:

9. Արտագնա այցելությունների ժամանակ մարզերում մատուցած ծառայության վերաբերյալ «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ» մուտքագրումները կարող են իրականացվել արտագնա այցելությունների ավարտից հետո 2 օրվա ընթացքում՝ անձնական քարտում նշելով մարզից վերադառնալու և պրոթեզի փաստացի տրամադրման օրը:

10. Սիլիկոնե լայներով և միոպրոթեզներ տրամադրվելու դեպքում անձնական քարտում և «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ»-ում կցել զինվորական ծառայության ընթացքում վիրավորում ստանալու վերաբերյալ տեղեկանք կամ այդ փաստը ապացուցող այլ փաստաթղթեր:

11. Յուրաքանչյուր եռամսյակ նախարարություն ներկայացնել նախորդ եռամսյակում տրամադրված պրոթեզների ISO ստանդարտներին համապատասխանող հիմնական դետալների և մասերի ներմուծման(գնման) փաստաթղթերը:

12. Ցուցակագրել և մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացնել այն անձանց տվյալները, այդ թվում՝ անուն, ազգանուն, ծննդյան օր, անձնագրի սերիա, պրոթեզի անվանում, քանակ, հեռախոսահամար, ովքեր չեն սպասարկվել սույն տեխնիկական բնութագրերով նախատեսված պրոթեզների քանակը սպառվելու պատճառով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
«30» հուլիսի 2018 թ. կնքված
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-18/40-Ի ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-6	51411130	Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման և տեղադրման ծառայություններ								41944400	73402700	104861000	104861000	104861000	104861000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » հունիսի 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » հունիսի 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն